Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Յունւարի 3-ին. Թիֆլիս. № 2.

## ՆՈՒԷՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՊԱՍՈՒՈՂ ՌԷՖՈՐՄՆԵՐԻՆ




Тип. С. Быхова, Тифлисъ.

ՇՈՒՆԸ ԿԸ ՀԱՉԱՅ-ԿԱՐԱՎԱՆԸ ԿԸ ԳՆԱՅ
(Թրք. առած)

Թող գայ փորձութիւն, թող գայ հողածանր
Յուսով եմ վաղ ուշ գարուն պիտի գայ։

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ"

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները կամ բաժանորդագրութիւն նորոգողները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, իսկ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ փակ է գիշերները
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Մեր հասցէն՝ Тифлисъ редакція „Хагабала
Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala".

ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԳՏՆՒՈՒՄ Է

Դվորցովայա փողոց Վիկտորիա հիւրանոցի զալում.

Եւ Վիկտորիա հիւրանոցն էլ գտնւում է այնտեղ՝ ուր Խաթաբալայի գրասենեակն է։

Կ. ՊՈԼՍՈՒՄ

«ԽԱԹԱԲԱԼԱ»ՅԻ հատավաճառը յանձնւած է գրավաճառ հրատարակիչ պարոն ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳԸԼԸՃԵԱՆԻՆ, որի գրախանութը գտնւում է՝

ՁԱԳՄԱՃԸԼԱՐ ԹԻՒ № 25

Նոյն տեղ կարելի է և բաժանորդագրւել։

## Ի՞ՆՉ ԿՈՒԼԻ ԷՍ 1909 ՏԱՐԻՆ

Ջուկերի իփ վուր նուր տարին գալիս է, համաշա էն ինք փիքր անում թէ տարին ինչ կուլի, վունց կուլի, ու չունքի էս սահաթիս մէ էփրէմէրդի էլ չունինք, վուր կարենայ գրուստ զուս գայ ու սաի ամենքին էն, ինչ վուր սաւելու է. ու էլի չունքի, հուզուրում՛ը խալխը պիտի վուր գիդենայ թէ ինչ բանը վունց կուլի պօլիտիկուրի աշխըրքումը, թէ հաուց կինքումը, զազրանիցումը, թէ էս միր քախկումը, աշխըրքիս վրէն, թէ աշխըրքի իրա մէջ տեղը, էտու համա էլ զուրթ վուր սախմ, ախպէր, շատ փիքր արի, շատ փիքր արի ու քիչ էր մնում վուր գժւէի, մէկ էլ տեհնիմ. ինչ տեհնիմ, մէ արլանդա (տեսիլք) մէ արլանդա. վուր, վուր ձեռին ունէր աշխըրքիս գուրձէրու հաշւի հանգի, մէ ինչ վուր բան, ու սաում էր ինձ.

—Դաադա՛, ի՞նչ ես, կասէ, գլխիս խիստ ցավ տալի, չես վախենում, կասէ, վուր հիմի քիզ մէ փաթերակ պատահի ու մէ քիչ ցմուռ, կասէ, շատ գումիտ անելուց. ախր էսաի ինչվուր գրած է՝ էնենց էլ կուլի աշխըրքի խէրն ու շառը, կասէ։

Հիմի ես գուցիմ վուր ձիզ պատմիմ թէ ինչիր կեր գրած էնդի, համա, չունքի ձիր գըլխումը շատ էլ մինձ մինձ բանէրու, իրգրների ու իրգրի զօրութիւննիրը չի կանայ իմանայ, էտու համա էլ, ես ձէր ձէրորիթ (դեռևս) կու պատմիմ էն, ինչ վուր ձիզ համա ուփրօ ինտերեսնի է։

Այ թէ ինչ կուլի էս 1909 տարուն

Թէ վուր մարթիքը, թաքաւուրնիրն ու իրենց նազիր վեզիրնիրը մէ քիչ խելուք չը ժամ էկան, կարայ ըլի վուր Եւրոպումը վայինարա ըլի։

Մէ փափա ղաած թաքաւուր կու մեռնի, Աստուծ հոքին լուսաւուրէ, ու էտ թաքաւուրի մահից ետը, իրա խալխը կու կուին մէկմէկու հիդ մինձութենի համա։

Էս բանը աջարաանդալի հանգը կու խառնի մէկէլ թաքաւուրնէրու միրան ու միտկը, ու ամեն մէկը զուգէ, վուր ինքն էլ մէ քիչ նազլեդնիկութին առանայ, չունքի խիխոճիրը իրանք վունչիչ չունին, վունց վուր հիմի Նեմենցնէրու թաքաւուր Վիլհէլմը, վուրի խարջլուխի փուղը չունքի պակսում է, էտու համա էլ իրա կայքը տորգով ծախում է։

Էս բանը միր Օսմէթին էլ խիստ կու շփոթէ, էսաի էլ փրթկոնէր կուլի, չունքի մեռնող փափա ղարած թաքաւուրի օրինաւուր նազլեդնիկնիրը մինք էլ ինք։

Մէկէլ էն վուր, սաանց միզ վաստուշնի վօպրօսը չի կանայ վիրջանայ։

Ձեր մինք խառնած կուլինք Եւրոպի խառնուշփութով, վուր միր հարևան մէ պուճուր թաքաւուրութիւնումն էլ պօլիտիկական չիլափլաւութին կուլի։

Էս բանը համար մասխարութին չգիդենաք։

Էս աէրութիւնումը Եւրոպի մինձ մինձ թաքաւուրնիրը զոռս կու կաղնին աէրն ու տիրականը. մինք, ռուսէթցիքս էլ անմառ չինք մնայ, չունքի մինք էսաի էլ պրատ ունենք բանց թէ ուրիշնիրը։

Էս կուլի Օսմէթից դուսըր։

Օսմէթում, իրա մէջ ինչ կուլի։

Ձուկերի էս տարի ձմիռը վաղ կցելից, էտու համա էլ գարունը շուտ կուլի։ Ինչ վուր ձին էկաւ, գիփ կու հալեի, գարնան ջրիրը կու մինձանան։ Ամառը ով գուրձիլ է, աշխատիլ է, կունենայ ամեն թաւուր միրք, ցորին ու գարի։

Ամառը փիչիր չինք վառի։

Միր պօլիտիկուրի պարտիէքը, արնոր խիստ աջ է ու խիստ ձախ, կամանց կամանց յիղ յիղ կեհան ու խաթարալիանէրու պարտիէն իրգրի աէրն ու տիրականը կուլի։

Պարլամէնտի մէշտեղի պարտիէքը իրենց բայրաղնիրը կու յանձնին միզ։

Թիստ ձախ ու խիստ էլ աջ պարտիէքը տուտաւցութիւննիր շատ կօնին ու վիրջն էլ շավինխաանիր կու դառնան։

Մինիստրնէրու կաբինէթում նուր մարթիք կու մանին, շատիրը զոռս գուքան ու միր «Ծորգովի դոմ» Թաստխաներին մարթամէջ չին խառնի։

Օէակցիօնիրը լրփութին ու փչութիննիր շատ կօնին, համա միր Բալանթարն ու Հաջի Համբարցումը չին թողնի, վուր նրանք իրենց արտի ուզածը անին։

Դաշնակցականնիրէմէն շատիրը կու մըտանին զուլուզի, ցզիալ դէմոկրատնիրը կեհան Սպահան, փարիրիկիրում ազիտացիա անելու։

Հնչակութինը կեհայ Աֆրիկա, հաբեշնիրի թաքաւուր Մէնիլիքի կուշտը, չունքի Մէնելիքն էլ հայ է էլի կրօնքով։

—

Վայինորէն կուլի վուր ըլի, կուլի վուր չըլի էլ։

Ու վայինորէն թէ վուր ըլի, կուլի. Փրանց Օսիփը վուր կու մեռնի՝ էտ Ճ՛լ, էտ էլ ինչ խուսակ. վա խօ չի կանայ մէ գլուխ ապրի։ Էտ էլ իրան հերիք է, վուր իրիք բան տարի թաքաւուրում էր։

Համա կուլի վուր չը մեռնի էլ։

Ղզլբաշի Շահը լաւ կուլի թէ վուր ինձ լսէ ու հուջաթութին չանէ, թէ չէ... ձմ գիդի ախպէր, մէկէլ անհար Սաաթար խանը իրեն շան կանչիլ ուտիցն։ Ղզլբաշումը ամեն բան կուլի։

Նեմենցնէրի թաքաւուր Վիլհէլմը կիխիստ յիղ էկած մարթ է այ. թէ վուր վայինորա, ան սրա հանգի արթուրմա ըլի վինտաւաթը նա կուլի։

Իզմիրլովը կաթղիկօս կու օծնի, թէ վուր կաթղիկօս հաստատւի։

Իչմիածնէմէն Իզմիրլովին ընթառաչ կեհան էրկու էպիսկոպոզ, քահնէմէն էրկու մշակական, մէ նուր գարական, բան դաշ-

նակցական ու խօ Գասպար աղա Կոլասուզովն էլ հիգը։

Կեցանք Սասմբօլ։

Էնդի կու տեսնինք մեր հասունները, շատ կու ծիծաղինք։

Մէ լաւ քէփ կու քաշինք ու Իգմիրլովին կու վերցնինք իրա մազարները հիդ, միասին գուքանք ջեր Լստի, մեր պեսյած քաղաք ու Էստղանց էլ էշմիածին։

Իգմիրլովը գուքայ թէ չէ, Սուրէնովը կու խառվի ու կէհայ իրա համա Հոխմուխմէի վանքը՝ վանահէր կուլի։

Մէսրոփ ու Մաթէոս վարթապետնիրը ու մէկէլ Գալուստ Միքայանը կեհան Սևան իշխան ուտելու ու գեւլաքնուր ծախելու, Սևանը կու դառնայ վունց վուր Վէնետիկ, թէ վուր էնդի էլ ապելցին կու բանի։

Կաթողիկոսական թեկնածու Մէսրոպ արքեպիսկոպոսը, էն վուր Շամախու առաջնորդ էր, կու գրգւի Թիֆլիզ մուզէյինումը պահելու։

Գասնակերեանց էպիսկոպոսը կու պահի ճեմարանում՝ զանիր ուտելու։

Աշտտ արփազանը գուքայ էշմիածին ու կու նշանակէլ վանքի խմրի մէջ քասօ երքելու, չունքի լաւ փոր ունի, լաւ էլ ձէնկունենայ։

Շիրակունի էպիսկոպոսը կեհայ Շիրակ քարոզիչ, համա քարոզին օչով չի գնայ։

Բէրբերով Մինասը կու խառվի ճեմարանումէն ու կու նշանագւի «Արարատի» խմբագիր։

Էչմիածնումը խիստ կռիւնիր կուլի։

Էպիսկոպոսնիրից շատիրը, վարթապետնին էլ հիգը, գուգին վուր մէկմէկու միս ուտին։

Համա կու վախենան, վունչ թէ իրենց նամուսիցը, անումիցը, ան խալխիցը, մաշ գակօնիցը ու ուէզդնի նաչալնիկի...

Տէր Գուսը փարաջէն կու հանէ ու կու մտնի մէ տպարանում միտրապաշ, ան կանտոռչիկ։

Նրան էլ էջմիածնից ղակազ չին տայ գազրանիցա գնալու ու իրա համա աստամբէք բերելու։

Տէր Էգնիկը «Հովիւը» կու փակէ, չունքի անշնուրք բան կուլի, Իգմիրլովի կաթխիկուսութենին «Հովիւ» գազէթ տալը։

Սրա օրէնանն էլ մոշյա կուլի։

«Արարատ» գազէթը կու գաթրի, չունքի Մինաս Բերբերովը չի ուզի էնտի մնայ ու «Արարատի» տիգը կու բռնէ «Գուրձ» գազէթը։

Ներսէս էպիսկոպոս Խուդավերդովը կու գնա գայ հօքեւորականնիրէմէն ու կու դառնայ աշխարհական, վունց վուր մինք։

Եղիշէ վարթապետ Մուրադովը Սև ծովէմէն ջուր կուտայ գրիմցոց, կու ցանէ ձմերուկ, գոգրա, բուխկ ու գազար ու միրչը՝ վայ մէ գէղի բղաեղով կու փախչի էնդանց։

Բաթումի Տէր Մէսրոպը կու գնայ Էրեւան իրա հօր տիգը, ու համէլ կուլի էնդղանց թեմական տեսուչ։

Աւէտիս Ահարոնովը մէ խէլօք բան կօնէ. կու թողնէ ամեն բան ու դալամը ձեռք կու առնէ, լաւ լաւ բանիր կու գրէ։ Համ էլ իրա համա հանգիստ կու ապրէ։

Բալանթարը մածնի շիշէք կու բացանէ։

Հայիրը թէ վուր նամուս ունին, էլ մուրթա գազէթնիր չին կարթայ, փուղ կուտան ու «Խաթաբալին» բաժնուրթ կու գրին։

(Էլի կուլի)

Դ. Կալուստեանց

---

## ՆՈՐԱԳՈՅՆ «ԳԻՒՂՈՒՄ՝ՆԵՐԻՑ»

(Նւիրում եմ Գէնրիկին և Դիւլիկին)

I

Դարի վէր ջուր ա գընում,
Նարաք, էն ո՛ւրա գընում,—
Ազգը մաՆանա կալած՝
«Մ՛ըշակը» զուր ա բընում։

II

Ջրոի ակը սազ պըտի,
Իմ «Աղբիւրը» վազ պըտի,
Ի՞նչ եմ անում յօքեւեան,—
Իմ հարը «Ցարազ» պըտի։

III

Կանչնել ես, կանչում էլ չես,
Բոյէղ ամանչում էլ չե՛ս,—
Էսքան խօսեց «Մեր Զայնը»,
Մի՞թէ ճանանչում էլ չե՛ս։

IV

Մ՛ըտել եմ գետը, խոր ա,
Հագել եմ լաթը, նոր ա,—
Խաքար տարէք Պօլիսին,
Թիֆլիսում «Գործով» կորայ։

V

Բաղւայ գեօլում «Վիշկի» ծառ,
Ոսկի «Զանգը» ճըղնին թառ,
Սուտլիկ Կօստի հարային,—
Հայը ինչո՞ւ ժամ չըրթար։

VI

Վէրէն իջաւ մութ խաւար,
Հանդէն եկաւ ուլ-տաւար,—
Ապա այսքան դերասան—
Ու մի քաղցած «Ցուշարա՛ր»։

VII

Ծաղիկ ունեմ ալայ ա,
Ճուրջը բարի ղալայ ա,
Փըշով պատած անուշ հոտ,—
Մ՛օտ ե՛կ,—«Խաթաբալա» ա։

VIII

Սարի խոտը ծեղւէ ծեղ,
Աղքէր, երթանք մըատեղ,
Թէ հարամին վըրայ տայ,
Դըլուխըս տամ գըլխիդ տեղ։

Ընտմ Նախօր



## ԻՄ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ծննդեան առթիւ

—

Շնորհաւորելով ամենքի նոր տարին ցանկանում եմ.

Տաճկահայերին.—Մի Յրկար իմաստուն, որ նրանց կարողանար բացատրել, թէ տաճկական Սահմանադրութիւնից յետոյ նրանք այժմ իրանց հայ պէտք է համարեն, թէ օսմանլի։

Ռուսահայերին.—Գուբերնիչներր ձեր գլխից անպակաս լինեն։

Պարսկահայերին.—Մի զօրաւոր թլիամ, որ ձեզ սիրելի դարձնէր, համ Մահմէդ—Ալի շահին, համ էլ Սաթար խանին։

Ամերիկահայերին, բուլղարահայերին եւ եգիպտահայերին.—Հաստ մահակներ այդ երկրների բնիկներին, որ ձեզ գանէ ուժով խոկեն դէպի ձեր այժմ արդէն բուսականին ազատ «վաթանը»։

Դուրեան եպիսկ.—Իգմիրլեանի հաշտուելն իրր «յեղափոխական» և մերժելը ռուս կառավարութիւնից։

Էջմիածնի արքեպիսկոպոսներին.—Իգմիրլեանի կամ Դուրեանի հրաժարականը, կամ մահը և նոր կաթ. ընտրութիւն։

Վարդապետներին.—Նոր ընտրութիւն և միաժամանակ նոր օրէնք, որով թոյլ տրւի վարդապետներին մտնել կաթող. ընտրելիների ցանկի մէջ։

Պետ. Դումայի հայ պատգամաւորներին.— Լեզուները շարժելու ընդունակութիւն։

Հայ հոգեւորական ութեան.—Դրսից Գուբերնիչների աչքն էք հանում. ներսից—մեր։

Դաշնակցութեան.—Տեռ վերևի գրածը։

Հայ խմբագրութիւններին.—Տես նոյնը։

Կուսակցութիւններին.—Ամուսնանալու իրաւունք։

Այրի քահանաներին.—Միենոյնը։

Ամուսնացածներին.—Ապահարզանի իրաւունք։

Մեր գիմնազիստներին եւ գիմնազիստուհիներին.—«Ազատ սիրոյ» լիգաներ։

Հայ գաւառական հոգաբարձուներին.—Երկաթեայ համբերութիւն, ժողովրդի ձայնը չըլսելու համար։

Հայ ուսումնարանների աշակերտներին.—Ուսուցիչներ, տեսուչ և հոգաբարձուներ պահելու և արձակելու կատարեալ իրաւունք։

Թիֆլիսին.—Ուտելու հաց։

Երեւանին.—Խմելու ջուր։

Հայ թերթերի.—Վճարող ընթերցողներ։

«Մշակին».—Տուաչի մեծացում, իսկ բանակցի փոքրացում։

«Միտք»-ին.—Միտք։

«Խաթաբալային».—Անպակաս լինել այն ամենքի գլխից, որոնք հայ ժողովրդի գլխին դարձել են խաթաբալա։

Դ—Ն—Լ.

# ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ



Հայ հասարակութիւնը այն ժամանակն է օգնում իր ծը-խական գպրոցներին, երբ աչքով տեսնում է իր տւած կոպէկ-ների օգուտը—երբ ուսուցչական խումբը, աշակերտները և հո-գաբարձութիւնն էլ հետը «Աւետիս» են շրջում։

# ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒ-ԹԵԱՆ ՄԷՋ



*Քաղաքագլուխ.*— Պարոններ իրաւատուներ, ի նկատի ու-նենալով, որ թէ քաղաքային սնդուկը և թէ նոյն իսկ բիւջետու-թիւնը, թոյլ չեն տալիս այդքա աւելորդ ծառայողներ ու-նենալ քաղաքային վարչութեան մէջ, ուստի խնդրում եմ պ. պ. իրաւատուներ, մեր բարեկամներից շատերին դուրս հանենք գործից։

*Իրաւատուներ.*— Ներողութիւն կանէք, մենք մեր բարե-կամներին չենք թողնի որ հեռանան. դա էլ ինչի՞ ենք մենք իրաւատուներ. թող հեռանան նրանք, որոնք պրոտէժէ չունեն։

պետութիւն անում, ինչ պիտի սովորեցնին իրենց աշկերտներուն, եփ իրանք չարլատան են ու վունչինչ չեն գիդի։

Սրանց անունները չեմ ուզում տալ, վայ թէ բեզարմաղ ըլին, սատ է ջոխին վուր վիկալնեն, գուզ կասուն կու փախչի։ Էս Թաւուր խիլքի տէր վարժապետները ինչ կանան չինի, վայ թէ չինածը քանդին. Էնդուր են ասում է, թէ հաուց չկօչէքը մէ գրօշ չարժին, մէնակ «այնուգանի» խաղն են սովրեցնում, էլ վունչինչ։

Քու բիձու ազի ազայ

Կակուլի

## ՋՐՕՐՀՆԵՔԻ ԵՐԱԶ
### ԿԱՄ
### ՄԻ ՊՏՈՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԺՈԽՔՈՒՄ

Մի զարմանալի, սարսափելի երազ տեսայ Ջրօրհնեքի գիշերը։ Ես գտնւում էի դժոխքում…։

Մի աներևոյթ ոյժ տարել էր ինձ Մասիսի ստորոտը։ Մութ գիշեր էր. քամին վզզում էր. ահ ու սարսափի մէջ էի…

Յանկարծ երևաց աչքիս մի ալեզարդ ծերունի.

—Ես Մովսէս Խորենացին եմ, ասաց, եկել եմ քեզ առաջնորդելու դէպի դժոխք։

Երկիւղից լեզուս կապւել էր. ես ձայն չէի հանում։ Ու ձեռքս բռնելով, նա տարաւ ինձ մի քարայրի մօտ. այստեղից ճանապարհը շարունակեցինք մի նեղ ու մութ ստորերկրեայ անցքով։ Երկար գնալուց յետոյ՝ մեր առաջ երևաց մի ահագին սև դուռ, որի ճակատին կրակէ տառերով գրած էր. «Ողջամ զքեզ հայոց աշխարհ»։

—Սա դժոխքի հայկական մասն է, ասաց Խորենացին, յետոյ նկատելով որ սաստիկ վախենում եմ, նա շտապեց ինձ հանգստացնել։

—Դու այստեղ միայն դիտելու ես եկել. դու դեռևս մեռած չես…

Այս խօսքերի վրայ, ես փոքր ինչ սիրտ առայ։

Խորենացին նշան արաւ և երկու սատանաներ դռները բացին. մենք ներս մտանք դժոխքի առաջին շրջանը։

—

Մխի և խոնաւութեան հոտ էր փչում. կիսախաւարի մէջ վխտում էին քահանաները. (դժոխքի այս մասը հոգևորականների համար էր)։

Առաջին անգամ իմ աչքովս ընկաւ մի… քահանայ ասեմ, թէ մեծ փոր։ Սա մի այնպիսի ահագին փոր ունէր, որը մնացած մարմնից երկու անգամ աւելի էր։ Բաւական չէր այս հսկայական փորը, նա աջ ու ձախ ձեռքին ունէր մի մի զամբիւղ, զանազան ուտելիքներով ու խմիչքներով լիքը. և այսպէս ծանրաբեռնուած նա ստիպւած էր բարձրանալ բլուրը և իջնելու այսպէս շարունակելու էր յաւիտեանս յաւիտենից…

—Սա մի քէլեխասէր, երկրաւոր քահանայ էր. ահա և սրա պատիժը, բացատրեց Խորենացին։

Հազիւ սա հեռացաւ մեզանից, դարձեալ անքանքրացի ձայն լսեցինք. մեր դիմացը գալիս էր մի ուրիշ քահանայ. նրա կողքերին երևում էին գրպանները, որոնք այնքան մեծ էին, որ ամէն մէկում մի մարդ կը տեղաւորւէր. այս գրպանները լիքն էին զանձանակի սև փողով. բացի դրանից նրա ուսերին բարձել էին մի ահագին բեռ «կողոպուտի» հին չորեր։ Այս ծանրութիւնները վրան, նա պիտի անվերջ պտըտւէր դժոխքում։

—Սա էլ իր արծաթասիրութեան և ագահութեան պատիժն է վայելում, ասաց Խորենացին։

—Այս ինչ է, միթէ դժոխքումն էլ են կռւո՞ւմ, հարցրի ես։ Ու իսկապէս երկու քահանայ կռւում էին, այն էլ ինչպէ՞ս էին կռւում. նրանք մօտենում էին, իրար մազեր քաշքշում, իրար չանգռտում, հեռանում, դարձեալ մօտենում…

—Սրանք, ասաց Խորենացին, սրանց կուի երբէք պատարագ չեն սկսել. ահա և սրանց պատիժը—յաւիտենական կռիւը։

—Սա կարծես կլեկչի լինի, ասացի ես, երբ նկատեցի մէկին, որը գլխին կաթսայ էր դրել։

—Ոչ, պատասխանեց Խորենացին. «քահանայ է նա». գլխին դրածը կաթսայ չէ, այլ արճճից կամիլավկա. տես, նրա հագուստը նոյնպէս արճճից է։ Այս քահանան գիշեր ցերեկ երազում էր կամիլավկայի և շքանշանների մասին. թող յաւիտենական կրի իր փառասիրութեան պատիժը։

Մենք առաջ անցանք. մօտեցել էինք պատին. այստեղ խուցեր էին փորւած վարդապետների համար. Ներսից լսւում էին տարօրինակ ձայներ։ Նրանք այնպէս ճֆ, ճֆ էին անում, կարծես փորերը պատռւում էին։ Երբ մօտից նայեցի, ինչ տեսայ, վարդապետները նստած էին ծալապատակ. նրանք այնքան գէր ու հաստ էին, որ ձեռները ու ոտները չէին նկատւում։ Նրանց մօտ դրել էին ահագին պարկերով ուտելիքներ, որից շարունակ պէտք է ուտէին և մնային անշարժ… այս էր սրանց պատիժը։

Ես արդէն զզւել էի շատ բան տեսնելուց։ Խորենացին տարաւ ինձ պատմական մասը. այստեղ էին մեր հին կաթողիկոսները, եպիսկոպոսները։ Բայց ես աղաչեցի Խորենացուն, որ թոյլ տայ ինձ հանգստանալ։ Նա տարաւ ինձ մի ազատ տեղ։ Ես յայտնեցի նրան զարմանքս։

—Միթէ, ասացի, սպասելի էր, որ դժոխքում քահանաներ կը լինեն։

—Աւելին չեմ ասում, պատասխանեց նա. երբ դուրս կգաս լոյս աշխարհ, հիմնիր մի ընկերութիւն.—քահանաների մէջ բրիս-

---

Իսկ ինչ է կարծում «Մեր Ձայնը», եթէ, օրինակ, Ն. Նախիջևանում մի լաւ ուժեղ ախրացու լինի, կամ մի լաւ և ուժեղ ժամկոչ—միթէ աւելի քիչ յեղաշրջում առաջ կը բերի։ Ի հարկէ մեծ. չէ որ կղերը միշտ էլ յեղաշրջումներ է առաջ բերել միայն թէ նա լինի… ուժեղ։

Տէր-Աստւած, ինչքան սիրում ենք մենք ուժեղ բաներ, բայց հէնց որ ուժեղը գալիս է և այժը մեր գլխին է բանեցնում, իսկոյն «զօնօններ ենք» անում. օրինակ կուզէ՞ք. ահա—Ներսէս V-ը, Գէորգ IV-ը, գաշ-նը և այլն և այլն։

—

Այ, բոլորովին ուրիշ բան է «Հովիւը», սա արդէն ուժեղներից իր յոյսը կտրել է և երգում է այն աշխարհը՝

«Ուր ամէն ոք, աստղերու ազատութեամբ, իր փայլով պիտի շողայ, ուր չի լինի այլ ես ոչ ցաւ, ոչ հեծութիւն»

Այլ կը լինի, կաւելացնենք մենք՝

Ոչխար ժողովուրդ՝ լաւ բուրդով, որոնց խուզելու մկրատներ կառնէ մեր երգերով (?) հովիւների ձեռքը…

Ահա այդ ժամանակ կգայ «Հովիւի» «վերն ու փառքը, սուրբն ու գերագոյնը»։

Օհ, ընթերցող, ես վախենում եմ սուր մկրատաւոր հովիւներից, երբ նրանք վերի ու փառքի, սուրբի ու գերագոյնի անունից են խօսում…

Երբ մեր Թերթերը նոր տարուն խօսում, վիճում, պայքարում, լացում ու ողբերգում են իրենց շրջապատող կեանքով, դա ես հասկանում եմ, բայց երբ նրանք Թողած մեր Ինծորեակն ու Համամլուն, մեր Առաքելեանին ու Լէօյին, գնում են ու Բարօն Էրենտալի եախիցը բռնում, նա, դա ես ոչ միայն չեմ հասկանում, այլ չեմ էլ ուզում հասկանալ։

Որպէսզի ինձ չմեղադրէք ամբաստանութեան մէջ, օրինակ բերեմ Հաշտարխանում հրատարակւող «Լրաբեր» Թերթը, որը 1908 թւի վերջին №-ում տպել է ամբողջ երեք սիւնեակ բռնող մի յօդւած, որի վերնագիրն է

«Բարօն Էրէնտալի քաղաքականութեան վերջաւոր հետևանքները»։

Երդւում եմ, որ «Լրաբերի» մէջ այդպիսի մի յօդւած կայ և այդ յօդւածի մէջ երեք տառը (համեա ազգային մը) ցուցմունքներ է անում Պրուսիային, խրատներ կարդում Աւստրիային, նրա դիմակը պատռում է, խորհուրդներ է տալիս Իտալիային և ընդհանրապէս բոլոր մեծ և փոքր պետութիւններին։

Եւ տեսէք բաղդի խաղին. այսօր Աւստրիայի մինիստրական պորտֆէլը գտնւում է, մի ինչ որ բարօն Էրէնտալի ձեռքին, երբ… Աստրախանում կայ և ապրում է հայ ազգի երեք տառը։

Ի հարկէ, երբ այսպէս Թարս գնան աշխարհի գործերը, մենք ճիշտ որ իրաւունք ունենք, ոչ միայն 1909 թւից այլ և 1910 թւից միմիայն անբաղդութիւններ սպասել…

Ну, что жъ! Մի տարի էլ կապրենք այսպէս։

Սատա-նէն

տնէութիւն տարածող ընկերութիւն!

Ես չկարողացայ ծիծաղս զսպել. մէջս ինչ որ վախ կար, բոլորը դուրս թռաւ։ Թորոսեանցս տարօրինակ առաջարկութեան առիթով ես նկատեցի.

—Մեր քաղաքում, ասացի, տեղ-տեղ փողոցների անկիւններում տախտակ են ամրացնում և վրան գրում. «Այստեղ արգելւած է աղտոտել». բայց հակառակի պէս հէնց այդ տեղերն է, որ ամենից շատ են կեղտոտում...

—Հասկանալի է, ասաց Թորոսեանցն և ժպտաց։

Եւ մենք անցանք դժոխքի միւս շրջանը, դէպի ներքև։ Այստեղ տանջւում էին երեսփոխները, հոգաբարձուները, ուսուցիչները...,

Զէնով Օհան

---

## ԹԱԶԱ ԱՒԵՏԻՍ

*Փէշքաշ Գասպար Կալաատուզովին *)*

Այսօր տօն է կուշտ հարբելու, աւետիս
Եւ կնոջը լաւ թակելու, աւ.
Այսօր տօն է խումար խաղլու, աւ.
Շոր ու շալիկ գիփ տալելու, աւ.
Այսօր տօն է տուն կարելու, աւ.
Ամառ չամառ կողոպտելու, աւ.
Աղգատէրը ջիբգիր դառաւ, աւ.
Աղբօր ջէբը գիր դարդակեց, աւ.
Խեղճ աղբէրը տամլայ էրեց, աւ.
Իսկ ջէբգիրը քէֆեր սարքեց, աւ.
Իզմիրլեանը շատ յուշացաւ, աւ.
Վարդապետներ կը պակւեն, աւ.
Յօրէլեանը էժանացաւ, աւ.
Թաց ու չորը յիրար խառնին, աւ,
Քանի սաղ է հայ չեն տալիս, աւ.
Երբոր մեռաւ, լաւ կը թաղին, աւ.
Մենք էլ ունինք խոշոր Դումա աւ.
Բայց դեռ խէրը մարթ չի տեսաւ, աւ։
Կոպալ չոմախ իրենց ձեռին, աւ.
Իսկ գավուլը մեր շլնքին, աւ.
Այսօր գէն խռովութեան, աւ.
Երևեցաւ ի մէջ Դումին, աւ.
Այսօր կարդաց Պուրիշկևիչն աւ.
Դումի մէջը ճառ լրբութեան, աւ.
Այսօր այդ գէն ապականեալ,աւ.
Ծնաւ երեր խռովութիւն, աւ.։

Ղալայչի Մարգար

*) Կու խնդրեմ կարդացողէմէն, վուր էս աւետիսը Ջատկի թաթխումի գիշեր երբին Ղալայչի Մարգարի խաթրու, չունքի հիմի սուշ է։

Գաս. Կալաատուզեանցի

## ՔՐՈՆԻԿՈՆ

Նոր տարին եկաւ յունուարի 1-ին, ճիշտ իրա ժամանակը։ Թիֆլիզում ընդունեց առւուր պատշաճին։ Շատ օղի և գինի խմւեց և շատ քաղցրաւէնիներ փչացաւ։

Նոյն օրը առանձին ոչ մի դէպք չեղաւ։

—

Նոր տարւայ առթիւ խմբագրութիւնս ըստացաւ մեծ քանակութեամբ շնորհաւորական հեռագրներ, նամակներ, պոստկարտներ և այցէտոմսեր, որոնց ուղարկողների կենացը մենք վայելեցինք և շնորհակալութեան հետ, մեր բարեմաղթութիւններն էլ ուղարկում ենք։

Ուստի խնդրում ենք բարեմաղթութիւնները փոստից շուտ ստանալ, որովհետև փոստում երկար մնալով կարող են շատ փչանալ։

—

Նոր-տարւայ օրը մենք ոչ մի բարձր աստիճան և ցածր աստիճան մարդկերանց չը ընդունեցինք, սովորութեան համաձայն։

—

Գաւառներից մեզ հասած ճշգրիտ աղբիւրներից լսում ենք, որ Նոր-տարին այդ տեղերումն էլ ժամանակին է հասել։

Միայն յետ ընկած տեղերում, ճանապարհին, ըքերից ու ցրտից մի քիչ մրսել էր և տները ուշ հասնելու պատճառով չէր կարողացել տեղ հասնել։

—

Մեզ հաղորդում են, որ ծննդեան և մկրտութեան օրը, մի քանի հարիւր անձինք, ցանկութիւն են յայտնել սրբազան առաջնորդին, կրկին մկրտւել, որովհետև կեանքի մէջ նամուսը կորցրել են, բուրը սևացրել երեսներից մեռոնը գնացել է և հաւատից էլ ոչինչ չէ մնացել վրէնները։

Ցանկացողների մէջն է եղած և մեր քահանաների 99 տոկոսը. սակայն սրբազանը մերժել է, առարկելով, որ կրկնամկրտութեան օրէնք չկայ մեզանում։

Այդ մասին մենք բողոքում ենք բոլոր ոյժով և ձեռքերով և ոտքերով. և առաջարկում ենք բոլորին էլ գալ և մկրտւել մեր աւազանում։

—

Թիֆլիզի մեր բաժանորդներից նրանք, որոնք յունուարի 1-ին Խաթաբալա չեն ըստացել շնորհիւ մեր ցրւիչների գինէմոլութեան, խնդրում ենք միւս 1910 թւին, երբ որ նրանք կրկին թերթ կը բերեն բաժանորդների մօտ, օղիով կամ գինիով չը պատւել. գինին կամ օղին կարող են իրանք յարգելի բաժանորդները խմել և ոչ թէ ցրւիչներին հիւրասիրել, որի պատճառով մեր ցրւիչներից շատերին, օղին վնասել է և նրանք փոխանակ թերթ բաժանելու խըռմփալիս են եղել։

* * *

Ցուցւած ծովն իսկ հանգիստ դառաւ
Մրրկայոյզ փոթորկից.
Եւ երկինքը ազատւեցաւ
Ահեղ որոտ շանթերից։
Լոկ վշտերի անվերջ յորձանք
Միշտ յուզւում են սրտիս մէջ.
Ա՜հ, իմ ցաւեր ու իմ տանջանք—
Դրանք միայն չունին վերջ։

Է.

ԿՐՕՆԱԿԱՆ —
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ —

## ՎԱՍՆ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆՑ

—

Որք ցանկան լուծանել զպսակս, թող լուծեալ համարեսցին եւ սրբ եղիցէ, եթէ կրկին ցանկան մտանել ի նոր ամուսնութիւն, այդպիսիքն յիմարութիւն առնեն. Ուստի պատուէր եւ խրատ տամք նոցա ամենեցուն, որք ստացեալ կան զապահարզանս եւ իրաւունս նոր ամուսնութեան ի սինոդէն ս. Էջմիածնի,— չըկատարեն երկրորդ մասն նորին. որպէս կրկնութիւն յիմարութեանց, քանզի եթէ ամուսնութիւն այդպէս յաւ յինի, ապա ուրեմն ինչո՞ւ գերապատիւ սինոդականքն ոչ պսակին.


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաժանորդագրութեան համար բացւած «ԽԱԹԱԲԱԼԱ»-ի գրասենեակը

ԳՏՆՒՈՒՄ Է

Դվօրցովայա փողոց, ՎԻԿՏՕՐԻԱ հիւրանոցի գաւթում, Նփրեմ Մատուրեանի դէպօյի կող.

Բաց է առաւօտ 9—2
երեկ. 6—8

Հին №№ ցանկացողները դիմում են նոյն տեղը։

Ցրւիչների համար մուտքը ազատ է

ՇԱՔԱՐ ՄԿՐՏՈՒՄԵԱՆԻ

ՎԱՐՍԱ-ՎՐԱՏՈՒՆԸ

(Парикмахерская)

Գտնւում է Գօլօվինսկի պրօսպ. տուն Միրզոյեւի, Արծրունի թատրոնի եւ կրպոստի դիմաց.

Երեսս ածիլելը, խուզելը և մազերը վարսաւելը կատարւում է խիստ արագ և մաքուր։

Գները խիստ չափաւոր

ეროვნული ბიბლიოთეკა

## ՏԵՍԱՆՔԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

*Բան մը ըլլալու է…*

I

Դէպքը տեղի կունենայ Ղալաթիոյ խորհրդարանին մէջ, ուր մեր ազգ. երեսփոխանները շաբաթը անգամ մը հաւաքուելով, խորհելու մարզանք կընեն, ու ազգին ցաւերուն դարման մը կը խորհին…

Սրահը լեփ-լեցուն է, տեղ ձգելու տեղ չեկայ ու ունկնդիրները, կարծես յիմարացած, միայն «կեցցէ» կը պոռան…,

Ատենապետը, ընկեր Աչքուոնի, կը շարունակէ.

—Պարզաձև ծրագրի կէտերից դուրս, ունինք և մի այլ գաղտնի ծրագիր, հակառակ դէպքում, Թիւրքերի հետ համախորհուրդ շարժումը պէտք է սկսէր. բոլգարները՝ Մակեդոնիայում, արաբները Արաբիայում, Կասթամունիի վիլայէթում թուրքերը առանձին, Այտնի վիլայէթում Զէյպէքներն ու Հայերս միանգամայն ու Թըրքաց Հայաստանի մի կարևոր կենդրոնից պէտք է բարձրանար ապստամբութեան դրօշը. կռիւը կը մղուէր ուժգին, և այն ատէն կը տեսնէիք, թէ ինչպէս կը ջախջախուէր բռնակալութիւնը, վերջացուց ատենապետը սեղմելով բռունցքը, որուն մէջ կարծես բռնակալութեան հոգին պահած ըլլար։

Ձայն տուին արտեւողած ծափերն ու որոտանման «կեցցէ» ները, ատենապետը շալկելով դուրս հանեցին, ու սկսեցին երգել.

«Դաշնակցական խումբ, գնանք մենք Սասուն»…

. . . . . . . . . . . . . . . . . .

Ու երբ մեկնեցայ սրահէն, արդէն դաշնակցական էի դառեր…

II

Ուրիշ օր մը, տարբեր սրահի մը մէջ կը գտնուիմ. հսկայ բազմութիւն մը կար. ատենապետը՝ անորոշ տարիքով, բարի դիմագծերով, ու քաղաքական պառաւելիի մը ձայնովը, չեչտուած ու համոզուածութիւնովը կը խօսի…

—Փորձառութիւնը, և անկէ օգտուիլը, յաջողութեան գլխաւոր պայմանն է, կըսէ ան։ Տարիներով հետևեցանք այդ թաքթիքին ու երբ համոզուեցանք որ մեր արդէն տկար ուժերը մասնակի ցոյցերով սպառելը, մեր դատին դաւաճանել է, լքեցինք այդ թաքթիքը, թէև ուրիշներ ձեռք առին զայն, ու սկսանք այդ ուղղութիւնով գործել։ Միշտ աշխատել անշշուկ, զօրանալ, պատրաստուիլ, ու պատեհ առիթին բարձրացնել ընդհանուր ապստամբութեան դրօշը. այս էր մեր ներկայ գործունէութիւնը։ Իսկ մի մոռանաք որ քաղաքական ազատութիւնը մեզի համար միջոց մըն է՝ հասնելու համար մեր հեռաւոր նպատակին, որ է աշխատաւոր դասակարգի շահերու պաշտպանութիւնը…

Ու աս կէտին վրայ խօսեցաւ, խօսեցաւ այնքան—որ ես ալ, ներկաներն ալ, բոլորս ալ «սօցիալիստ» եղանք. ու երբ վերջացուց ատենախօսութիւնը, սրահէն դուրս ելնելու համար, ալիքի պէս տատանուող բազմութեան գլուխներուն վրայէն քալելով գնաց…

Ու երբ սրահէն դուրս գալով կերթայի, համոզուած հնչակեան մը եղայ. ու որովհետև այդ չափով չէի կրնար բաւականանալ, սկսայ ուրիշներուն ալ քարոզել…

III

Սա թերթերու և հանդէսներու տատանութեան մէջ, անցեալ օր ձեռքս անցաւ շաբաթաթերթ մը, որուն հոս… անխուսափաբար «Ձայն վայրենեաց» կ՛ըսեն, մէկ տառի մը փոփոխութիւնով։

Այդ թերթը օրգանն է այն յեղափոխական խմբակցութեան, որ իր հերոսներուն անունով կը կոչուի Արգուեան-Մարգուկներեան։

Գրօվիտենսի մէջ (Ամերիկա) հրապարակորէն դատախօսութիւն մը կը սարքուի այն խմբակցութեան կողմէ, ուր ընկեր ատենխօսը, աս խօսքերը կ՛ընէ…

—Կուսակցութիւնս կը ջանար պատրաստուիլ ուժով ապստամբութեան մը։ Երկիրը մտցուցած էր փորձառու և ռազմագէտ օտար զինուորականներ, քննել և աշխարհագրել տուած էր երկրին այն կէտերը մանաւորապէս, որոնք իբր ապստամբական պիտի ծառայէին, և արտասահմանի մէջ ալ կամաւորներ կը պատրաստէր. պէտք չէր տեսած սակայն իր յառաջացրածներն ու արդէն գլուխ հանածները բեմերէն թմբկահարելու, աչքի երևալու և կամ գնահատուելու համար…

Այս տողերը կարդալէս ետքը, մի խնդաք վրաս, ես ինծի Արգուեան խմբակին յարեցայ, անոր դրօշին տակ կամ մեռնելու կամ ազատութիւն տեսնելու համար…

IV

Բայց… այսօր փոստը ինծի ծրար մը բերաւ. անհամբերութեամբ կը բանամ զայն ու ինչ տեսնեմ…

«Ծրագիր հայ սահմանադրական Ռամկավար կուսակցութեան» պզտիկ տետրակ մը։

Չէ, ալ կ՛օգտէ, խէրը տեսնենք ձեր ծրագրին։

Վեց ամիս կ՛ընէ գլուխս ազատած չեմ այդ տեսակ մարդոցմէ, ատենախօսներէ, նորաստեղծ յեղափոխականներէ, որոնք ամենէն աւելի անտանելի են… վերջապէս հանգստանալու միջոցը գտած ըլլալ կարծեցի, քաշուելով ամեն բանէ, արհամարհելով ամեն ծրագրի, թաքթիքի ու չեմ գիտեր ինչի հետ…

Տէլօ

## ՉԵՄ ԿԱՐՈՂ

Ինտելիգենտ երևալու և իմ առողջ աչքերս չփչացնելու համար, ոսկէ շրջանակով ակնոց չդնել։

Ինձ վայելչակազմ պահելու համար, կորսէթ չդնել և իմ հաստ մէջքս՝ միգիս հաւասարեցնել։

Բամբակ, կարմիր ներկ, օդեկոլօն և պուդրայ ծախողների յաջողութիւնը տեսնել և չնախանձել նրանց։

Բարեկամուհուս մէկը պուդրա լաճանաչելու պատճառով, պուդրա անելիս նրան հետ չտանել։

Գրպանումս փող չունեցած ժամանակ, ես ինձ երջանիկ զգալ և պարոն Մանթաշովին չյիշել։

## ՆՈՐ ՏԱՐԻ

Անցան դարե՛ր, բայց մեզ համար
Դեռ չի եկել նոր տարի,
Մե՛զ, հալածող, մերկ ու բշուառ
Զաւակներիս խաւարի…

Մենք հաց չունենք ու խարշ եկանք
Աղքատութիւն աղերսել.—
Մեզ մերժեցին, ոտների տակ
Տրորեցին, հարուստնե՛ր…

Մեծազարդ պալատներում
Դուք խնդացիք… մենք լացինք,
Սառուցապատ նկուղներում
Ինչպես որդեր սողացինք…

Դուք՝ երջանիկ, կեանքից արբած՝
Անհոգ նստած էք… իսկ մենք,
Որ միշտ ճնշուած ենք ու սառած
Ցրտից. անգամ չգիտենք

Ի՞նչ է հանգիստ, կամ ի՞նչ ծիծաղ..
Ու այսպէս է մեր վիճակ՝
Ծնուել աղքատ. ապրել աղքատ,
Կրել միշտ մահ տանջանք…

…Բայց սեւ ամպերն մռայլ երկինք
Հեռանում են, ե՛ւ ա՛հ, տե՛ս՝
Մեր տան խարխուլ պատուհանից
Մի շող ընկաւ դէպի մեզ։

Այդ մեր տենչած արշալոյսի
Մատաղ շողն էր նորածին..
Նա մեզ փայլեց ու նազ կուսի
Նման ժպտաց մեր դէմքին…

…Ու մի առօտ. երբ շողշողայ
Ազատութեան վառ արփին,—
Մեզ այն պահին միա՛յն կուգա՝
Մեր նոր կեանքի նոր տարին..

Շաքեդ

# ԹՂԹԵՐ

## «ՄԻՆԴԱՐԻ» ՏԱԿԻՑ

—

Կար ժամանակ, երբ իշխանաւորները բազմում, ուտում, քնում և դատում էին իրենց փափուկ և խորհրդաւոր մինդարների վրայ նստած։

«Մինդարը» նրանց և բազկաթոռն էր և արդարադատութեան зерцал-ն և... գրասենեակը։

Այժմ, փառք Աստուծոյ, կան բազկաթոռներ, կան և յատուկ գրասենեակներ, իսկ որ գլխաւորն է, կայ արդարութեան գործադրութիւն։

Մինդարը մեռաւ...

Բայց չմեռան մինդարականները, այսինքն այն իշխանաւորները, որոնք սովորել են առաջուայ նման ամեն ինչ «մինդարայթի» (մինդարի տակ դնել) անել։

Եւ որ ցաւալին է, այդ մինդարականները բուն են դրել մեր հոգևոր երախայի մէջ։

Թեմական առաջնորդներ—մինդարականներ։

Յաջորդներ՝ մինդարականներ։

Կոնսիստորիաներ՝ մինդարականներ։

Եւ... վերջապէս Սինոդ-մինդարականներ։

Ի հարկէ դուցէ մինդարը և փափուկ է և յարմար և գաղտնապահ և... շահաւէտ— բայց ոչ բոլորի համար, այլ նրանց վրայ նստողների։

Իսկ ժողովրդի և օրինական հասարակութեան համար, այդ մինդարները ուղղակի անտանելի են, վնասակար։

Ահա այդ աչքի առաջ ունենալով, մենք ծրագրեալ կերպով մտանք մեր հոգևոր-վարչական զանազան հաստատութիւնները և... ուժեղ ձեռքով, անապառելի, նոյնիսկ մինդարականների համար, դուրս քաշեցինք մինդարը, գէն շպրտելով նրանց վրայ հանգիստ և ապահով բազմածներին և նրանց տակից դուրս հանեցինք թղթերը, որ և դարձնում ենք հայ հասարակութեան սեփականութիւն։

ա) Սինոդից հանեցինք «Անարդարութեան երեսից» վերնագիր կրող մի ապւած գրքոյկ, որի վրայ կար 1907 թուականը, իսկ մէջը տասնեակ մեղադրական կէտերից բաղկացած գեղծումների (մօտ 30—40 հազար ռուբլու) մի ամբաստանագիր, որի վրայ գրած էր Բէնիկ վարդապետից Յուսիկ եպիսկոպոսի մասին։

բ) Հաշիւ Մարց կալուածքի—դա մի առակայի քննութիւն էր։

գ) Տպարանի գործակալի հաշիւը 952 ռ. դողութեամբ։

դ) Շուշու կոնսիստորիայի հաշիւը, որ կար Գասնակէրեան սրբազանի 650 ռուբլու մի հաշիւ։

ե) Շուշու դպրոցի հոգաբարձութեան մի կասկածելի ծախք, ոչ աւել ոչ պակաս 1500 ռուբլու։

զ) Երևանի կոնսիստորիայի գործերը Սուքիաս սրբազանի անունով 804 ռուբլու արժողութեամբ և թեմի 1508 ռուբլու ապառիկների մի ցուցակ։

է) Թիֆլիսի Կոնսիստորիայի գործեր, որի վրայ գրած էր—մուտքը արգիլուած է։

Աչքի առաջ ունենալով, որ մենք անկարող ենք այս բոլոր գողութիւնների, գեղծումների, ապօրինութիւնների թղթերն ու հաշիւները քննել, մինդարականներին արդարացնել կամ մեղաւոր ճանաչել, ուստի մեր կողմից նշանակեցինք արժ. Բէնիկ վարդապետին քննիչ և զեկուցանող. ասում են հայր սուրբը ունի շատ սուր աչքեր, նշաւոր գրիչ և անկաշառ մտալ. յիմարութիւն, ուստի թող նա այդ թղթերի հետ ծանօթանայ և ուղարկելով Սինոդին, պահանջի այդ բոլոր գեղծումների համար քննութիւն *), որովհետև, ինչպէս տեղեկացանք մեր բոլոր մինդարական սրբազաններն ու հայր-սուրբերը, որոշել են գողացուած գումարների 10%-ը նուիրել յօգուտ տաճկահայ սովելոց, իսկ այդ 10%-ը կանի տանուագը 15000 ռուբլի։

Արժէ այդ «չնչին» գումարի համար մի բան անել, բայց ի սէր Աստուծոյ, ոչ մինդարայթի։

Սպասում ենք, որ մեղադրեալները իրենք կը պահանջեն, որ Սինոդը ընթացք տայ այդ մինդարային շանտաժին, քանի դեռ չէ եկել «երկաթէ կաթողիկոսը», որը ոչ խաթր գիտէ, ոչ բարձրաստիճան։

Սպասում ենք...

Քննիչ յանձնախումբ

*) Ինչպէս լսել ենք, Սինոդը իր քննիչին արձակել է, բայց մենք նրան պահում ենք։ Խմբագր.

# ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աղա Խաթարալա

Մեր շկօլումը հեսաբ վարժապետներ կան, վուր դուն լոյեղ չիս անի, վուր հեղնիքը խօսիս, ամա իփ վուր նրանք հոքաբարձուի խնամի ու բարեկամ ին, արժանաւոր ին։

Մէ վարժապետ, մէ ջրհեղ հարուստ վուրփեւրու հին փափկից ու էն օրից կցից քէփ ու դուխ պաղչեներումը, մեկխանաներումը. էնդայ դավլաթը կերաւ, փչացրուց, համ էլ էնդան իշի քոթակ էր տալի. էնիկն էլ աղդա գրից, թէ էս թաւուր մարթ էլ չիմ ուզի, կոռէ, բաժնում է մարթեմէն, բանը գնացել է Սինոդ։

Մէ ուրիշն էլ, մէ ախչկայ հին փափկից, հարուր թուման տուէին ու լաւ բաժինք։ Նրանց կինքը էրկու ամիս քաշից. պալուն վարժապետը համ էնդայ փողը կերաւ, համ բաժինքը ծախից, իժում գլուխն առաւ ու քախկէմէն կորաւ. խեղճ կնիկը հօրանց տուն գնաց ու մէ էրեխա էլ ունէ. հիմի արի ու դրուստ դադաստան արա, էս թաւուր չաթուրեասնիրը վէնց ին վարժա-

# ՃԱԲԹԻ-ՃԱԲԱԹ

II

Այ, այ, այ, այ... ինչ վատ տարի ենք ունեցել, այնքան վատ, որ յիշելն իսկ չարժէ...

Նու տասցէք խնդրեմ, եթէ տարին գոնէ մի փոքր լաւ լինէր, մի՞թէ պ. Շահրիարը իրեն թոյլ կտար այդքան յուսահատ լինել, այնքան յուսահատ, որ գրիչն առնէր և «Մշակում» գրէր հետևեալ ողբերգական տողերը

> «Ես ուրախանալու, նոր տարու գալուստը ողջունելու, ոչ մի պատճառ չեմ գտնում։ Մենք մի քայլով աւելի մօտեցանք գերեզմանին, մահին...»

Այս երկու նախադասութիւններից այնպիսի թախիծ էր փչում, որ ես, վախենալով թէ մի գուցէ պ. Շահրիարը մի յուսահատ քայլ գործի, շտապեցի «Մշակի» խմբագրատուն և, փառք Աստուծոյ, նրան գտայ ամենատխուր տրամադրութեան մէջ, ողջ և առողջ և այստեղ միայն իմացայ, որ ուրիշ բան է տխուր գրել, ուրիշ՝ տխուր լինել...

Բայց նոյնը չի կարելի ասել «Գործի» մասին։

Ճիշտ է, նրա նոր-տարուայ №-ում «Մշակի» յուսահատական շեշտը չկայ, բայց 33 то խմբագրութեան մէջ ուղղակի սուգուշիւան էր, յուսահատութիւնը իր ապանիչ մատներով շանգոտել էր բոլորի սիրտն ու ուղեղը և մի ինչ որ փիլիսոփայական պէսսիմիզմի մէջ գցել բոլոր նրա ու դուրս անողներին։ Դուք մի հաւատաք թերթի առաջնորդողի «Զւարթութեան յաղթանակի» կոչին, դա նոյնքան սուտ է, որքան «Մշակի» հիասթափութիւնը. դրան կասեն այլուած սրտի մխիթարութիւն, և եթէ «Գործի» «Նշաւորը» մի փոքր, նու շատ փոքր անկեղծութիւն և շիտակութիւն ունենար, նա կջարդէր իր «Նշաւորը», որովհետև նրա ծայրը ամբողջովին թաթախուած էր վրէժխնդրութեան, փոքրոգութեան և, յամենայն դէպս, ոչ ջենտլմենական թոյնով. իսկ այդպիսի գործիքով հասարակական կեանքին մօտենալը և այն էլ այսօրերին, ինչպէս ռուսներն են ասում, не прилично...

Գալով «Նոր-Նախիջևանի» «Մեր Ձայնին» սա էլ նոր-տարուայ առթիւ յայտում է «մի ամուլ տարի էր» 1908 թիւը. ոչ մի նշանաւոր երևոյթ դուստ հայկական կեանքում չկատարուեց» ողբում է նա և արտասուխառն աչքերը ցցում է նորընտիր կաթողիկոսին

> «Ինչպէս զօրեղ պետերը մեծ յեղաշրջում են առաջ բերել, այնպէս էլ ուժեղ կաթողիկոսը կարող է առաջ բերել հայ կեանքում»։

Խեղճ «Մեր Ձայն»—նա մոռանում է իր մի շարաթ առաջ ասածները—այն, որ մեծ յեղաշրջում կարող է առաջ բերել Օրմանեան սրբազանը—եթէ միայն նա գայ և Նախիջևանի քարոզիչ լինի։






ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# 1909 Թ.

# 4 ՏԱՐԻ „ԽԱԹԱԲԱԼԱ“ 4 ՏԱՐԻ

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ–ՍԱՏԻՐԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն միակ գունաւոր պատկերազարդ հայ շաբաթաթերթն է.
«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն հրատարակւում է ռուսական և եւրոպական լաւագոյն թերթերի օրինակով.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն հրատարակւելու է 12—16 երես, որոնց կը մտնին բացի սովորական չորս երես կարիկատուրաներից այլ և, և՛ հարևանների կեանքից, դէպքերից և անձնաւորութիւնների [illegible], նկարներ և տեսարաններ.

## ՄԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ

ՆԿԱՐԻՉՆԵՐ՝ Գ. Բաշինջաղեան, Գ. Գրինեւսկի, Գ. Երիցեան, Ա. Միրզոյեան, Օ. Շմերլինգ, Գ. Ռոսսեր եւ ուրիշներ

## ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ

Աթանասեան Ա. (Ստորակէտ, Նա-Զեմ), Աստղունի, Աղայեան Ղ., Բալուղեան Ջալալ բէգ (Սեան-Նախշի), Բագրատունի (Փալանդուզ Մկօ), Գեօզալ Աղաբաշի, Գրիչ, Բաղէն, Երիցեան Ալեք. (Գ. Կալանթարեան, Բիօ-Գրաֆ), Ձախ, Լէօնիդ, Խենթ, Կրէտ, Կայծակ, Հաշ., Հայկազունի (Նէմօ-Լէֆենդի), Մէլիք Շահնազարեան), (Ծմրուշի Խաչան), Մատաղօր, Տէր Մէլիքսեդէկեան Ս. (Ղալալչի Մարգար) Ռէպէրտիօր, Սատիր, Օշխար, Փինալ եւ ուրիշներ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ՈՒՄ կը տպագրւեն ռուս և օտար երգիծաբան ֆէլիէտոնիստների լաւագոյն երգիծաբանական գրւածներ, որոնց շարքերի մասին այլ՝ Ստորակէտի «Շաբթէ-Շաբաթ» ֆէլիէտոնները.

Մենք ունենք սեփական թղթակիցներ Կովկասի, Ռուսաստանի եւ Անդրկովկասեան երկրի բոլոր կարևոր եւ հայաշատ վայրերում այլեւ արտասահմանում՝ Կ. Պօլսում, Բեռլինում, Վանում, Փարիզում եւ Լոնդոնում.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ԹԵՐԹԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ № 1 ԻՑ

## ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

| ԹԻՖԼԻԶՈՒՄ | | ՈՒՐԻՇ ՏԵՂԵՐ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ. | |
|---|---|---|---|
| Տարեկան | 4 ր. | Տարեկան | 5 ր. |
| Կէս տարւանը | 2 ր. 50կ. | Կէս տարւանը | 3 ր. |
| Երեք ամսւանը | 1 ր. 25կ. | Երեք ամսւանը | 1 ր 50կ. |

ՀԱՍՑԷՆ՝ Тифлисъ. Редакція „Хатабала“
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ՝ Tiflis (Caucase) Rédaction „Chathabala“.

Հեռագրի համար՝ Тифлисъ «Хатабала»

Խմբագիր-հրատարակող՝ ԱՒՏ. ԵՐԻՑԵԱՆ

# ԼՈՒՍԱՆԿԱՐԱՆ Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ






**ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ Живописцева въ г. Орлѣ.**

ԾԵՂԿԻ ՀԱՏՈՒԿԻ. Պէտրիտի սրւակը 50 մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ. խողովակի մէջ 5 մարդու համար՝ 5 կոպ.: Մի բուրկւոց պակաս՝—չէ ուղարկւում: Ճանապարհածախսի համար—30 կոպ.: Երեք բուրկւոց աւելի ուզողին ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԶԵՂՉ մինչև 20 տոկոս:
Հասցէն՝ г. Орелъ, „Телятникъ Живописцева"

Мебельный магазинъ

**БР. ГАЛУМОВЫХЪ,**

*Мадатовская ул., противъ Александровскаго сада*

Имѣется постоянно большой выборъ:
УМЫВАЛЬНИКОВЪ: англискихъ и московскихъ.
КРАВАТЕЙ: англійскихъ, подносимыхъ и мѣстной работы.
ЗЕРКАЛА: простѣночныхъ, для переднихъ и фантази
МЯГКОЙ МЕБЕЛИ: „Рококо" модернъ и др. стилей, орѣховой мягой и вѣнсой.
СТУЛЬЕВЪ вѣнскихъ всемірно извѣстныхъ фабрикъ „ТОННЕТЪ" и „ВОЙЦЕХОВА", а также дубовыхъ, спеціально для столовыхъ.
ГРОМАДНѢЙШІЙ выборъ буфетовъ, обѣденныхъ, письменныхъ, ломберныхъ и др. столовъ, комодовъ, шифоньерокъ, библіотекъ, гардеробовъ, вѣшелокъ и пр.

**Полная стильная обстановка комнатъ.**



**ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ**

# „ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

*Ամենալաւ Աշխարհում*



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասոնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՆՊԱՅՄԱՆ
ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ [illegible]-
ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ



**ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ**

# ՊՐՕՎՕԴՆԻԿ

**ԱՐՏՕՆԻԱԾ**

**ՆԵՐԿԱՅԱՑՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ**

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

# ՄԻՒՆԽ ԵՒ ՎԷՅՍ

**ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ**

1888

# ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1909 թ.

## ՄՇԱԿ

Քաղաքական եւ գրական լրագիր

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսուանը նոյնպէս 10 ր., տասն ամսուանը՝ 9 ր., ինը ամսուանը՝ 8 ր., 8 ամսուանը 7 ր., եօթ և վեց ամսուանը՝ 6 ր., 5 ամսուանը՝ 5 ր., 4 ամս. 4 ր., 3 ամս. 3 ր., մէկ ամսուանը 1 ռուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ր., Թուրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

1909 Թ.

## „ԱԽՈՒՐԵԱՆ“

Գրական, հասարակական թերթի

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Բաժանորդագինն է

Ալէքսանդրապոլ, տարեկան 2 ռուբլի

օտարքաղաքներ 3 ռ.ր

«Ախուրեանը» լոյս է տեսնելու կանոնաւոր կերպով առայժմ շաբաթը երկու անգամ։

Խմբագրութեան հասցէն՝ Александрополь, Редакція „Ахурянъ“.

1909 թ.

## ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ

XXVII տարի XX

Աղբիւրի տարեկան գին 3 ր. (արտասահման 5 ր.)

Տարազի » » 6 ր. ( 10ր.)

Աղբիւր, Տարազ յաւելուածներով, Առողջապահով, Գեղափնջիկով 10 ր. արտասահման 10 ր.։

Тифлисъ, редакція АГБЮРЪ ТАРАЗЪ.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

1909 Թ.

## „ՀՐԱԶԴԱՆ“

Գրական, հասարակական, տնտեսական օրաթերթի

Որը լոյս է տեսնելու առայժմ շաբաթը երկու անգամ հինգշաբթի և կիրակի օրերը։

Երևան և Ռուսաստան 3 ր. Պարսկաստան 5 ր. Տաճկաստան 60 ղրշ. Եւրոպա և այլ տեղեր 15 ֆր.։

Հասցէն՝—Эривань, Редакція „Разданъ“

1909

## ՄԵՐ ՁԱՅՆԸ

Հասարակական, գրական եւ քաղաքական օրաթերթի

«ՄԵՐ ՁԱՅՆԸ» կը հրատարակուի առաջիկայ 1909 թ. նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով. լոյս կը տեսնի շաբաթական երեք անգամ.—չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

«ՄԵՐ ՁԱՅՆԻ» տարեկան բաժնեգինն է.—Արտասահման 10 ռուբլի, Նոր-Նախիջեւան և Ռոստով Դոնի ափին 5 ր., դուրսը, ամեն տեղ 6 ր.։ Կէս տարուանը ամեն տեղ 3 ր., երեք ամսուանը 1 ր. 50 կ.։

Դիմել՝ Нахичевань на Дону. Редакція „Меръ Дзаинъ“. Կամ՝ Nacithevan s-Don, Russie. Rédaction „Mer Dzain“.

## ՆՈՐ ԴՊՐՈՑ

ԱՄՍԱԳԻՐ

(Երկրորդ տարի)

ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Ուսուցչական միութ. անդամների համար տարեկ 3 ր. կէս տար. 2 ր. ոչ անդամների համար 5 ր. կէս տ. 3 ր.։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція журнала «НОРЪ ДПРОЦЪ»

Լոյս տեսան և վաճառւում են

ՆԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1909 թ.

## „ՇԻՐԱԿ“

Պատի եւ ծոցի պատկերազարդ օրացոյցները

բոլորովին նոր յաւելուածներով ճոխացրած ու հարստացրած և գունաւոր պատկերներով զարդարուած։ Դիրքն ու ծաւալը՝ եղած հայ օրացոյցներից ՄԵԾ և արտաքինով շքեղ։ Տախտակը՝ յայտնի նկարչի վրձինի գործ է՝ պատրաստուած լիտոգրաֆիայում վեց գոյնով, ներկայացնում է Տաճկահայ ժողովրդի առաջ խորտակուած բանտի դռները, գահավիժուած բռնութեան պահապան վիշապը, ջաղջախուած հայ ստրկութեան շղթաները և տաճկահայ մանուկը ողջունում է իր հայրենիքի ազատութեան նոր տարին։

Գները, պատինը 50 կ., ծոցինը 20 կ. գումարով գնողներին զեղջ։

Դիմել՝ Александрополь, Типографія „Ширакъ“ Карапету Апинянцу.

Բացուած է բաժանորդագրութիւն

1909 Թ

## ԼՐԱԲԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Բաժանորդագինն է՝ Աստրախանում տարեկան 3 ր. հատով 5 կ.։ Աստրախանից դուրս՝ 4 ր.։

Հասցէն՝ Астрахань, Редакція „ЛРАБЕРЪ“

Կամ Astrakhan (Russie). Rédaction „LRABER“

Խմբագիր-Հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Скоропечатная „Дзноба“ Московская ул. № 5.

## ԸՆՏԱՆԻՔՈՒՄ



—Այ մարդ, ինչ փիս խասիաթի ես դառել. էս պրազնիկ-
ներն էլ անցան ու դու էլի դովլաթ ես անում. մի՛ մինչեւն ինչ է.
մինչեւ էլ չես թողնում, որ ապրեմ.
—Ա՛ կնիկ, ինչ ես տուտուց տուտուց գլուխ տալիս. Հայաս-
տանում, ասում են սով կայ, փողը էնդի ուղարկեմ, քանց թէ
մինչեւ ու լաւ ապրենք.
—Էնդի ինչքան պէտք է ուղարկես որ...
—Էլի որ չուղարկեմ, մի երկու մանէթ խօ կուղարկեմ.

## ԲԱՐԻ ՄԱՐԴԻԿ



—Պարոն Վազամ, տեսնում էք, տեսնում էք թէ ինչպիսի
ոչնչութիւն ենք եղել մենք բնութեան տարրերքի մէջ.
—Ի՞նչպէս.
—Մէսինայի դէպքը ինձ բոլորովին ջղայնացրել է.
—Հա, ճշմարիտ էք ասում, ես նոյնպէս խիստ վրդովուած
եմ դժբաղդների դրութեամբ. մանաւանդ որ մենք նոյնիսկ մի պատ-
ւաւոր և հարուստ ընտանիքում—խնջոյքում Մէսինայի դժբաղդ-
ների կենացը խմեցինք.




### [illegible]

Հայերից ոչ պակաս անխիղճ են դէպի իրենց գեղացիները
և մեր հարեւան վրացիք.
Տագանրոգսւսը գերասանուհի Նասա. Փետրուարի 25 անհամեր
նրանք ասում են... դուրս վռնդեցէք թատրոնի շէնքից
նրան, որ խեղճակեց եղել է վրաց թատրոնի ամենախոշոր սիրեն-
րից. մէկը